ԿԱՐԾԻՔ

Երևանի պետական համալսարանի ասպիրանտ Սնակ Արթուրի Պողոսյանի
|Հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները§
ատենախոսության

Քրեական իրավունքի առանցքային ինստիտուտների մեկին՝ հանցակցության ինստիտուտին, առնչվող խնդիրները մշտապես գտնվել և շարունակում են մնալ քրեագետների հետաքրքրության կենտրոնում: Թեև ՀՀ թե գործող, թե նոր քրեական օրենսգրքերը անդրադարձ են կատարել հանցակցության ինստիտուտի տարբեր ասպեկտներին, մասնավորապես՝ հանցակիցների տեսակներին, ձևերին, քրեական պատասխանատվության առանձնահատկություններին, այնուհանդերձ քննարկվող ինստիտուտին վերաբերող հիմնախնդիրները, միևնույնն է, շարունակում են մնալ արդիական: Մասնավորապես, առանձին հետաքրքրություն են ներկայացնում հանցակցության հատկանիշներին վերաբերող դրույթները, այն է՝ հնարավոր է արդյո՞ք հանցակցություն անզգուշությամբ կատարվող արարքներում, հանցակցության փաստման համար հանցանքի ավարտման ո՞ր պահը պետք է գնահատել՝ արարքի իրավաբանական, թե փաստացի ավարտման, հնարավոր է արդյո՞ք խոսել հանցակցության փորձի մասին, որքանո՞վ է հիմնավոր հանցակիցների տարբերակումը 4 տեսակների, առկա է արդյո՞ք հանցակցության այն իրավիճակներում, երբ անձը կատարողին տրամադրել է գործիք կամ միջոց, սակայն մինչև հանցանքը սկսվելը այն հետ է վերցրել, օժանդակողի պարագայում արդյոք խոստումների շրջանակը պետք է լրացվի, ո՞րը պետք է դիտել որպես օժանդակության ավարտման պահ՝ խոստում տալու, թե խոստման բովանդակությունը կատարելու և այլն:

Ներկայացված հարցերի շրջանակը, բնավ չի հավակնում սպառիչ լինելու և հանցակցության ինստիտուտին վերաբերող խնդիրները ամբողջական էվոլյուցիայի մեջ են՝ պայմանավորված նաև քրեական օրենսգրքի այլ ինստիտուտներում կատարվող փոփոխություններով:

Նման պարագայում հանցակցության ինստիտուտին վերաբերող հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը կասկած չի հարուցում:

Ավելին, հանցակցության ինստիտուտին առնչվող մի շարք խնդրահարույց և դեռևս իրենց վերջնական կանոնակարգումը չստացած հարցերի առկայությունը դժվարություններ է առաջացնում հանցակիցների քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման առումով: Ասվածը վկայում է Ս. Պողոսյանի կողմից ընտրված թեմայի արդիականության և կարևորության մասին:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, տասներկու ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից: Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի հրատապությունը, ներկայացվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության մեթոդաբանական, տեսական և նորմատիվ հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Անդրադառնալով ՀՀ-ում խմբակային հանցագործությունների վիճակագրությանը՝ հեղինակը նշում է, որ ՀՀ հանցավորության մեջ այն աճի միտում է դրսևորում, սակայն ներկայացված ժամանակագրական հատվածը՝ 2014-2018 թթ (աշխատանքի էջ 3), կարծում ենք, բավականին կարճ է նման միանշանակ եզրակացության հանգելու համար:

Առաջին գլխում՝ «Հանցակցության հատկանիշները, հանցակիցների տեսակները, դրանց օրենսդրական բնորոշման և պատասխանատվության առանձնահատկությունները», հեղինակը քննարկում է հանցակցության հատկանիշները, մասնավորապես ներկայացնում իր տեսակետները այն հարցի շուրջ, թե հնարավոր է արդյոք հանցանքը համարել մի խումբ անձանց կողմից կատարված, եթե հանցանքը կատարող անդամներից միայն մեկն է բավարարում հանցագործության սուբյեկտի հատկանիշին, իսկ մյուսները՝ ոչ: Հեղինակը գտնում է, որ նման դեպքերում պարտադիր պետք է լինի գոնե երկու սուբյեկտների առկայությունը (էջ 12):

Ինքնատիպ գաղափար է հեղինակի կողմից առաջ քաշվում նաև աշխատանքի էջեր 16-17-ում, որտեղ հեղինակը գտնում է, որ հանցակցության գնահատման համար կարևոր պետք է դիտարկել հանցանքի ոչ թե իրավաբանական, այլ փաստացի ավարտման պահը:

Հետաքրքիր մոտեցում է դրսևորվել նաև աշխատանքի էջ 21-ում, որտեղ հեղինակը նշել է, որ օժանդակությունը, առանձին դեպքերում, հնարավոր՝ նաև միակողմանի սուբյեկտիվ կապի պարագայում, այն է՝ երբ հանցավոր վարքագիծ դրսևորող մյուս անձինք չեն գիտակցում իրենց օժանդակողի գոյությունը:

Աշխատանքի էջ 33-ում հեղինակի կողմից առաջ է քաշվում ՀՀ քրեական օրենսդրության առումով բավականին յուրատիպ առաջարկ. նախատեսել հանցակցության փորձի ինստիտուտը, որը վաղուց առկա է արևմտաեվրոպական երկրներում, սակայն բնորոշ չէ արևեկաեվրոպական երկրների քրեական օրենսդրությանը:

Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է հանցակցության ձևերի վերլուծությանը:

Ատենախոսության շրջանակներում հեղինակը մանրամասն անդրադառնում է հանցակցության ձևերին, գտնում, որ նոր քրեական օրենսգրքում հանցակցության ձևերն առվել հստակ են ներկայացված: Հեղինակը գտնում է, որ հանցավոր համագործակցության և կազմակերպված խմբի միավորումը և դրա ձևափոխումը լիովին արդարացված է, քանի որ ներկայիս օրենսդրության կարգավորումները առավել շատ խնդիրներ են ստեղծում, քան նպաստում իրավակիրառ պրակտիկայի իրացմանը:

Հեղինակի կողմից ներկայացվում են նաև հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները, հանդես գալիս մի շարք առաջարկություններով՝ ՀՀ քրեական օրենսդրությունը կատարելագործելու առումով, մասնավորապես անդրադառնում ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքներով հանցակազմերում դրանց՝ հանցակիցներին մեղսագրելուն, հանցանքի շարժառիթը, նպատակը մեղսագրելուն և այլն:

Աշխատանքի երրորդ գլխում հեղինակն անդրադառնում է հանցակիցների քրեական պատասխանատվությանը հատուկ դեպքերում, այն է՝ չհաջողված հանցակցության, հանցակցի սահմանազանցման, կամովին հրաժարման, շարունակվող կամ հատուկ սուբյեկտով հանցանքի հանցակցելու դեպքում: Հեղինակի կողմից ներկայացվել են չհաջողված հանցակցության՝ դրդչության, օժանդակության դեպքերը և հեղինակը արտահայտել է այն մոտեցումը, որ եթե

օժանդակողը միջոց. գործիք է տրամադրել, բայց կատարողը դրանից չի օգտվել, ապա այդտեղ չհաջողված հանցակցություն առկա չէ:

Հեղինակը, անդրադառնալով շարունակվող հանցագործության ընթացքում նոր համակատարողի ներգրավման հարցին, նշում է, որ եթե համակատարողը շարունակվող հանցագործությանը ներգրավվել է ոչ թե սկզբից, այլ ընթացքում, ապա ամբողջ շարունակվող հանցագործությունը կմեղսագրվի նրան, եթե նա գիտակցել է, թե ինչ է կատարվել մինչև իր միանալը, և ինչ է կատարվելու հետագայում, և իր վարքագծով նպաստել է մյուս հանցակիցների դիտավորության իրականացմանը:

Պետք է նշել, որ հեղինակին հաջողվել է բովանդակալից, հետաքրքիր և օրիգինալ աշխատանք ներկայացնել: Ներկայացված աշխատանքի շրջանակներում հեղինակը կատարել է բազմաթիվ առաջարկություններ, արտահայտել իր տեսակետները հանցակցության ինստիտուտի վերաբերյալ գիտական վիճաբանությունների, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում խնդրո առարկա հանդիսացող հիմնախնդիրների վերաբերյալ՝ հանդես գալով ինքնատիպ լուծումներով: Հեղինակը լայնորեն կիրառել է ՀՀ դատական պրակտիկայի, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության նյութերը, ինչը արժեքավորում է կատարված աշխատանքը:

Աշխատանքի վերաբերյալ առկա են նաև որոշակի դիտարկումներ, մասնավորապես՝

1. Քննարկման կարիք ունի հեղինակի այն դիրքորոշումը (էջ 68), որով նա առաջարկում է մեղմացնող հանգամանքներով հանցանքին հանցակցելու դեպքում տարբերակված մոտեցում դրսևորել կատարողի և մյուս հանցակիցների պարագայում. կատարողին պատասխանատվության ենթարկել մեղմացնող հանգամանքով հանցանքի կատարման, իսկ հանցակցին՝ մեղմացնող հանգամանքի հանցանքին հանցակցելու համար, սակայն ենթարկելով ավելի խիստ պատժի: Թեև նման տեսակետ արտահայտվել է նաև իրավաբանական գրականության մեջ, սակայն ցանկալի կլիներ լսել հեղինակի առավել մանրամասն պարզաբանումները այս հարցի շուրջ: Օրինակ, եթե անձը խոչընդոտ վերացնելով օժանդակում է անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանությանը, ապա որքանով

իրավաչափ կլինի նրան ավելի խիստ պատասխանատվության ենթարկել, քան նույն արարքը կատարողին:

2. Անդրադառնալով օժանդակության ինստիտուտին՝ հեղինակը ներկայացնում է օժանդակության դրսևորումները, այնուհանդերձ կան հարցեր, որոնց ևս ցանկալի կլիներ արձագանքել, մասնավորապես՝ արդյո՞ք առկա է հանցակցություն այն դեպքերում, երբ անձը հանցանքի կատարման համար անձին տալիս է գործիք, սակայն մինչ հանցանքի կատարումը այն հետ վերցնում: Նման դեպքերում պետք է խոսել հանցակցի կամովին հրաժարման, թե՞ հանցակցության բացակայության մասին:

3. Անհաջող ձևակերպում է տեղ գտել աշխատանքի էջեր 12-13-ում. հեղինակը նշում է, որ եթե հանցագործությունը իրականացվում է 2 կամ ավելի անձանց կողմից, որոնցից միայն մեկն է սուբյեկտ, ապա խմբի հատկանիշը բացակայում է, և արարքը պետք է որակվի որպես հանցանքը խմբի կողմից կատարելու փորձ՝ փաստական սխալի կանոններով: Նման պնդումը, կարծում ենք, գոյության իրավունք ունի այն դեպքերում, երբ սուբյեկտը թյուր պատկերացում է ունեցել հանցանքի կատարմանը իր հետ մասնակցող անձի տարիքի, մեղսունակության կամ հատուկ սուբյեկտ լինելու կարգավիճակի մասին, սակայն չի կարող ընդհանրական կերպով վերաբերել բոլոր այն դեպքերին, երբ հանցանքի օբյեկտիվ կողմը կատարել են երկու կամ ավելի անձինք, որոնցից միայն մեկն է սուբյեկտ: Հնարավոր է, որ սուբյեկտ հանդիսացող անձը հստակ գիտակցել է, որ իր ետ արարք իրականացնող սուբյեկտի չափանիշներին չի բավարարում և որևէ թյուր պատկերացում չի ունեցել դրա վերաբերյալ: Այդ դեպքում, դժվար է հղում կատարել փաստական սխալի ինստիտուտին, ինչը փաստվում է հենց հեղինակի կողմից՝ աշխատանքի հետագա շարադրման ժամանակ:

Այնուհանդերձ, ներկայացված դիտարկումները բնավ չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժանիքները:

Սևակ Արթուրի Պողոսյանի «Հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները» վերտառությամբ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է

ԺԲ.00.05 Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Գրախոսող

ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ի.գ.դ. Ա.Մարգարյան

Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Ա.Մարգարյանի ստորագրությունը հաստատում եմ:

Դեկանի տեղակալ Հ.Խաչիկյան